

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/1

12 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ 25.07.2013 թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 06.06.2013 թ-ի թիվ 1103780 ստուգման ակտի դեմ:

«Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

«Այսուհետ ենք, որ 15.05.2013 թ-ի թիվ 2215403 հանձնարարականը բացվել է անմիջապես այն բանից հետո, երբ մենք առանց որևէ պատճառաբանության հեռախոսազանգով հրավիրվել ենք հարկային տեսչություն և չենք ներկայացել: Մենք ուղղակի հետևել ենք ՊԵԿ-ի բարձրաստիճան աշխատակիցների հայտարարություններին, որ չի կարելի առանց պատճառի հարկատուներին հրավիրել հարկային տեսչություն, իսկ մեզ հրավիրելիս ոչ մի պատճառի մասին չի նշվել: Մեր չներկայանալը հավանաբար դիտվել է որպես անհնազանդություն և ՀՏ-ի կողմից բացվել է հանձնարարական:

Մեր բողոքարկման հիմքը հանդիսանում են մեր տեսագրությունները, որտեղից պարզ երևում է, որ 50 դրամի ՀԴՄ կտրոն չտրամադրելու հանդիսանում է ստուգող տեսուչների կողմից մեր աշխատակցին շեղելու, ապակողմնորոշելու և շփոթեցնելու արդյունք:

Կից ներկայացնում ենք դեղագործ-վաճառողուհու բացատրությունը, իսկ անհրաժեշտության դեպքում կարող ենք ներկայացնել նաև տեսագրությունը:

Խնդրում ենք հաշվի առնել վերը շարադրվածը և վերանայել Շենգավիթի ՀՏ 06.06.2013 թ-ի թիվ 1103780 ստուգման ակտը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով «Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 15.05.2013 թ-ի թիվ 2215403 հանձնարարագրի «Ռիթմ Ֆարմ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 17.05.2013 թ-ի թիվ 2215403 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

Կարպիս Յախանեջյանի կողմից 17.05.2013 թ-ին ժամը 10:43-ին ք.Երևան, Շիրակի 18 հասցեում գտնվող դեղատնից կատարվեց հսկիչ գնում 50 դրամի չափով՝ ջրակաթոցիչ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Անահիտ Ղարոյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 11:00-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն՝ 16870 դրամ ընդհանուր գումարով, որում ներառվախ չէր կատարված վճարման արժեքը:

Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 50 դրամը, ժամը 11:02-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 11:02-ին նորից դուրս բերվեց Z հաշվետվությունը 50 դրամ ընդհանուր գումարով:

Գնված ապրանքը ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեց տնտեսվարողին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 24.05.2013 թ-ին հրապարակվել է թիվ 1103780 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 06.06.2013 թ-ի թիվ 1103780 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկվող դեպքում ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 11:00-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 11:02-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը: Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքը և ետ են ստացել հսկիչ գնման գումարը: Հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքը ետ վերադարձնելու վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով:

Հարկ է նշել նաև, որ ընկերության տնօրենը ևս փաստեց, որ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված ապրանքի դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, սակայն տնօրենի մեկնաբանմամբ, ՀԴՄ կտրոնը չի տրամադրվել հարկային տեսուչների կողմից ընկերության աշխատակցին շեղելու և շփոթեցնելու պատճառով:

Հանձնաժողովի 27.08.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու

մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների, որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, բողոքը և բողոքին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

